ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/23442-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-607-31.05.2023-ԱՌՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» 712-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության փորձագետ
Հեռ. 010 515 403 077 78 78 21
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-607-31.05.2023-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 41-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել լրացում և սահմանել, որ կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ, լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում, ենթակա է պարտադիր ձևաբանական հետազոտության ախտորոշման ճշգրտման, հաստատման, բուժման արդյունավետության գնահատման նպատակով:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է հետևյալը.

Հաշվի առնելով, որ հնարավոր չէ սպառիչ և ամբողջական սահմանել բոլոր այն դեպքերը, երբ կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ ենթակա է պարտադիր ձևաբանական հետազոտության, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ ախտորոշման ճշգրտման, հաստատման, բուժման արդյունավետության գնահատման նպատակով ենթակա է պարտադիր ձևաբանական հետազոտության, բացառությամբ լիազոր մարմնի կողմից սահմանված այն դեպքերի, երբ ախտորոշման ճշգրտման, հաստատման, բուժման արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը բացակայում է:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 712 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ
ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Նազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-607-31.05.2023-ԱՌՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարությանների կայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

07.07.2023

ՆԱԽԱԳԻԾ

Պ-607-31.05.2023-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը «հեղուկ» բառից հետո լրացնել «, լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է գործող օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում արձանագրված՝ կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան եւ (կամ) հյուսվածք եւ (կամ) հեղուկ ձեւաբանական հետազոտության ենթարկելու պահանջի պարտադիր լինելու հանգամանքով:

Այսինքն, գործող օրենքում՝ մարդու, կենդանության օրոք, մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձեւաբանական հետազոտության ախտորոշման պարտադիր լինելը որոշակի դեպքերում առաջացնում են ավելորդ դժվարություններ:

Մի կողմից, պարտադիր լինելու հանգամանքը բացատրվում է նրանով, որ ներկայումս կյանքի ընթացքում ձեւաբանական հետազոտությունների դերն օրեցօր մեծանում է հաշվի առնելով կենսանյութի, վիրահատական նյութի պաթոհիստոլոգիական մեծածավալ ուսումնասիրությունները, մեծ նշանակություն է տրվում պաթանատոմի մասնագիտական առավելագույն ճիշտ ախտորոշումը՝ կիրառելով ախտորոշման ճիշտ ու ժամանակակից մեթոդները՝ ընդունված չափանիշներով եւ համագործակցելով կլինիցիստների հետ:

Մյուս կողմից, ցանկացած դեպքում մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձեւաբանական հետազոտության պարտադիր լինելու հանգամանքը առաջացնում է հավելյալ ծախս, առավել եւս, հանգեցնում է ավելորդ գործողության՝ հեռացված օրգանի երկու տարի ժամկետով պահպանություն: Բժշկագիտության տեսակետից բոլոր դեպքերում մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ

հյուսվածքի ձեւաբանական հետազոտության պարտադիր լինելը արդյունավետ չի համարվում: Այսինքն, վերը նշված գործընթացը պարտադիր սահմանելը, բոլոր դեպքերի համար, ոչ նպատակահարմար է:

2. Ակնկալվող արդյունքը.

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է միայն լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում պարտադիր դարձնել մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձեւաբանական հետազոտությունը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից: Նախագիծը քննարկվել է ՀՀ-ում գործող լիցենզիա ունեցող ախտաբանաանատոմիական գործունեություն իրականացնող ներկայացուցիչների հետ: